ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Քաղաքացիների դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
/2016թ.3-րդ եռամսյակ /

	.	3-րդ եռ.
1. Ստացվել են նամակներ ընդամենը		505
որից՝		
աջակցություն		497
առաջարկություն		1
հարցում		2
բողոք		*5*
այդ թվում՝		
կրկնակի		3
կոլեկտիվ		10
3. Ըստ հարցի բնույթի՝		
բնակարանային		6
կոմունալ-կենցաղային		15
շինարարական		8
արդձեռ/տրանսկապ/		-
գյուղատնտեսական		3
բնութ. պահպանութ		2
առևտրի		1
կենսաթոշակի և նպաստի		2
առողջապահության		89
կրթական և մանկ.հիմն		24
գիտութ.կուլտուրա		-
ֆինանսական		268
օրենսդրական		-
քաղ. և որդեգրման		1
աշխ.տեղ և հաշվառման		49
հողհատկացում և հողօգտ		2
միգրացիոն ծառ. վերաբերյալ		2
ապարատային		27
այլ հարցեր		6

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականի երրորդ եռամսյակում քաղաքացիների ընդունելության և նրանց դիմումների, բողոքների ու առաջարկությունների քննարկումների մասին

ՀՀ Սյունիքի մարզպետարանում 2016 թվականի երրորդ եռամսյակում քաղաքացիներից ստացվել է 505 դիմում, որից 497-ը՝ աջակցության խնդրանքով, 5-ը՝ բողոք, 1ը՝ առաջարկություն, 2-ը՝ հարցում:

Գյուղատնտեսական, կոմունալ-կենցաղային, բնակարանային, նպաստի և կենսաթոշակի հարցերի վերաբերյալ 26 դիմումներին տրվել են սպառիչ պատասխաններ: Աշխատանքի տեղավորման մասին 49 դիմումներից դրական լուծում է ստացել 8-ը, մյուսները վերցվել են հաշվառման:

Տեղական ինքնակառավարման մարմինների և կազմակերպությունների իրավասություններին առնչվող 41 դիմումներ վերահասցեագրվել են համապատասխան համայնքների և կազմակերպությունների ղեկավարներին:

Նյութական օգնության խնդրանքով մարզպետին դիմած 268 քաղաքացիներից դրամական օգնություն է ցուցաբերվել 253 հոգու: Անվճար բուժսպասարկման հարցով դիմած 65 քաղաքացիներից բավարարվել է 61-ի խնդրանքը, 5 քաղաքացու տրվել է ծննդօգնության պետական հավաստագիր, 12 հոգու՝ առողջարանային ուղեգիր:

Կանոնակարգված է մարզպետի մոտ քաղաքացիների ընդունելությունը: 2016 թվականի երրերդ եռամսյակում կատարվել է 239 քաղաքացիների ընդունելություն:

Բացի այդ, մարզպետի՝ համայնքներ կատարած ամենամսյա այցելությունների ժամանակ կատարվել են արտահերթ ընդունելություններ:

Մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներում քաղաքացիների անհատական ընդունելությունը կազմակերպվել է ամենօրյա, աշխատանքային կարգով: